Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

*ԱԼԵՔՊՈԼՅԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՄՇԱԿ»-ին 1872-1892 թթ.**

«...այլ է պատիւը ուժի մշակին
և այլ է յարգանք, մտքի զինուորին...»
Պետրոս Բէբուրեան

19-րդ դարի երկրորդ կեսին հայ հասարակական միտքը թոթափեց առաջին դարակեսի «խումարը» և քաղաքական ընդհանրության տրամաբանությանը բնորոշ գիտակցական հասունություն ի հայտ բերեց, որը շողարձակեց մամուլում:

1872 թվականից Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի հրապարակախոսության լեզուն տնական ժամանակ դարձավ Ալեքսանդրապոլի անաչառ մտավորականության նախընտրելի արտահայտչամիջոցը:

«Մշակ»-ը մշտապես բարձրաձայնել է ալեքպոլցի առևտրականի, արհեստավորի և գյուղացու հոգսերի մասին: Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքի կարևորագույն բաղադրիչի՝ առևտրի ճիշտ կազմակերպման և զարգացման հիմնախնդիրները, ապրանքների շուկայական գների տատանումները պատշաճ են ներկայացված պարբերականի նյութերում:

Ալեքսանդրապոլում առևտուրը շահութաբեր զբաղմունք էր, բայց օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ այն երբեմն կորցնում էր իր գրավչությունը: 1874 և 1875 թվականները ալեքպոլցի առևտրականների համար դժվար տարիներ էին, ինչպես գրում է առևտրականի որդի, նոտար, բանահավաք Աղեքսանդր Ափրիկյանցը (Ափրիկեցի, Ափրիկացի, Տեղացի, Ա. Ա., Տ.). «Շատերը նոցանից սնանկացան, իսկ աւելի շատերը արդէն սնանկանալու վերայ են» (1875, №24): Ստեղծված իրավիճակն ըստ թղթակցի առևտրականների՝«թուճարների»[1] ագահության, խելացի վարչարարության պակասի, կրպակների բազմաքանակության և մանրավաճառների գործունեության հետևանք էր: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը մոռացության մատնեց այդ զրկանքները, և «միլիոններ թափվեցին Ալէքսանդրապոլ, Ալէքսանդրապոլը դրվեց քաղաքական զարգացման նպաստող պայմանների մէջ և նիւթական բարգաւաճման ճանապարհի վրա» (1880, №80): Մոայլ պատերազմը, սակայն, թմրեցրեց բնակչության զգոնությունը: Դրամի փայլից շլացած՝ քաղաքացիներից ու գյուղացիներից շատերն ակամա փարվեցին ճոխությանը, տարվեցին անցողիկ հաճույքներով՝ հարբեցողությամբ և խաղամոլությամբ: Ճանապարհորդ Խ.Փ.Գ.-ն ավյունով բնութագրում է ստեղծված իրավիճակը. «Նոյն ամսի 17-ին (1879թ. դեկտեմբեր-Գ.Ա.) մտայ Ալէքսանդրապոլ: Ի՞նչ տեսայ. զողութիւն, լրբութիւն, շատ յաճախ քեօթակաբանութիւն, ամեն բօպէ անամօթ բառերով հայհոյանքներ ու կնու կնու յիշոցներ» (1880, №9): «Մշակ»-ի ալեքպոլյան թղթակիցներն սկսեցին սթափության կոչեր հնչեցնել, սուր ասեղնե-

---

* *Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:*

[1] *Թուճար (թուրք. tüccar)=առևտրական:*

բով ծակել «բիրդեանաղա»[2] դարձածների «չաղացած սիրտը»: Լուսավորության ջահը ձեռքերին՝ նրանք պայքարում էին տգիտության դեմ:

Տնտեսական «առաջադիմությունը» շուտով զիջեց միապաղաղ առօրյային: Գործ չլինելու հանգամանքից դժգոհ փնթփնթան առևտրականներին շնորհալի հրապարակախոս Տեղացին տնտեսագիտական հասարակ կանոնով է պատասխանում. «Անցո՛ր, մտիր մեր քաղաքի մէկ ծայրից, դուրս արի միւս ծայրից, տեսրից շատ՝ դիւքեան կը տեսնես: Այսպէս վաճառաշահ քաղաք է մեր քաղաքը: Ցետոյ էլ ասում են՝ «առուտուր չըկայ». այսինքն՝ չի գործում առաջարկ-պահանջարկի սկզբունքը (1879, № 112: Հմմտ. 1882, №139): Մեկ ուրիշ թղթակցության մեջ նա անխնա գանակոծում է գրագիտությունն արհամարհող, ստախոս և շողոքորթ վաճառականներին՝ «ձկնկուլ», «զարաչու խալի»[3] և «քեասիպքեար» կոչվածներին, որոնց կյանքի միակ նշանաբանը հարստանալն է (1879, №201): Նամակագիր Ավետիք Նալյանցն էլ մերկացնում է Ալեքսանդրապոլում մեծ համբավ ունեցող ուխտավոր-վաճառականներին: Այդ հաջի-աղաները Երուսաղեմ ուխտագնացության ժամանակ տեսակ-տեսակ ապրանքներ էին գնում և վերադառնալուց հետո՝ «տեսածս լուսը վկայ», «համբուրածս վկայ», «գլխադիրը վկայ» սուտ երդումներով կրկնակի թանկ գներով վաճառում (1873, №24): «Մշակ»-ի աշխատակից Պողոս Բեբուրյանն (Պ. Բ., Շիրակեցի, Շ.). այդպիսի գիրուկ հարուստներին հակադրում է գործարար Մկրտիչ Ձիթողցյանին: Նա հրճվանքով խոսում է այն մասին, որ գործարարն իր երկու որդիներին ուղարկել է Բելգիայի Լիեժ (Լյուտիխ)՝ քաղաք կաշեգործություն և զարեջրագործություն սովորելու (1890, №93): Ի դեպ, նրանցից ավագը՝ Պողոսը, վերադառնալով, Ալեքսանդրապոլում կառուցեց կաշեգործարան: Մտավորականը ցանկություն է հայտնում, որ Ձիթողցյան ընտանիքի նման «միւս դրամատէրերն էլ թողնէին «չարչիութիւնը», արշինը և գեազը, և հետամուտ լինէին արհեստների և արդիւնաբերութեան» (նույն տեղում):

Հոդվածագիրները ցուցադրում են քաղաքի տնտեսական կյանքից իրենց բանիմացությունը, հասարակության մեջ սերմանում դրա բարեփոխման գիտակցությունը: Քաղաքային տնտեսության կազմակերպման եվրոպական փորձի տեղայնացման օրինակով նրանք նախագուշակում են Ալեքսանդրապոլի տնտեսական ապագան:

«Մշակ»-ի 1880-1890-ական թվականների ալեքսոլյան թղթակցությունների մի ստվար խումբ վերաբերում է Ալեքսանդրապոլի շուկայում ծավալված անկանոն առևտրին: Այդ երևույթի պատճառն, ըստ դրանց, վերավաճառողներն էին՝ «մադրաբազները» («մանտրաբազ», «կինտո», «սերկՁի»)[4]: Քաղաքացիների և քաղաք զանազան ապրանքներ բերող գյուղացիների համար նրանք չարիք էին. «Դրանք մի քանի խումբ անգործ, անարուեստ մարդիկ են, որոնք առաւօտեան արշալուսի հետ ծագում են հրապարակի վրա և ամեն մի ուտեստի պաշար խլում

---

[2] *Բիրդեն (թուրք. birden) = հանկարծակի, անսպասելիորեն:*

[3] *Ղարաչի (թուրք. garaçi) = անզգամ:*

[4] *Մադրաբազ (թուրք. madrabaz) = խարդախ, խորամանկ մարդ: ՍարկՁի (թուրք. sarkĝi) = կախ ընկնող, պնդերես: Կինտո (վրաց. კინტო) = փողոցային վարք ու բարքի տեր, անկիրթ:*

են գիւղացու ձեռքից, ծեծելով, հայհոյելով և ամեն մի կերպ խաբելով» (1881, №139: Հմմտ. 1880, №151; 1890, №96; 1891, №107; 1892, №68): Քաղաքային իշխանություններին չէր հաջողվում կարգուկանոն հաստատել շուկայում:

Ժամանակի հասարակական միտքը հատուկ զուրգուրանք էր տածում հայ գյուղի և գյուղացու նկատմամբ: Նրանց պետք էր պաշտպանել կապիտալիստական տնտեսաձևի հարվածներից: «Մշակ»-ի ալեքսոլցի «զինվորներն» այդ ազգապահպան գործից անմասն չմնացին: «Մշակ»-ի թղթակիցների կողմից Ալեքսանդրապոլի գավառի հայկական գյուղերի ախտորոշումը բազում ցավեր է հայտնաբերում՝ վարելահողերի և խոտհարքերի սակավություն, տգիտություն, անհամերաշխություն, վաշխառու կապիտալի ավերիչ ներգործություն և այլն:

Տասնամյակների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության և գյուղերի թիվն ավելացել էր: Օրինակ, ինչպես գրում է «Մեր երկրագործների այժմյան վիճակը» արժեքավոր հետազոտության հեղինակ Շիրակեցին, Ալեքսանդրապոլի գավառի Հոռոմ գյուղը 1830 թվականին ուներ 45 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 247, Փոքր Ղարաքիլիսան (Ազատան) 1830 թվականին ուներ 53 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 398, Մեծ Քյափանակը (Բասեն) 1830 թվականին ուներ 77 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 206 և այլն (1890, №58): Ժողովրդագրական նման իրավիճակը լուրջ մարտահրավեր է ներտում երկրի կառավարությանը, քանի որ Ալեքսանդրապոլի գավառի գյուղատնտեսական նշանակության հողերը քիչ էին: Գյուղացիների միջև հողի պատճառով հաճախակի վեճեր էին ծագում: «Մշակ»-ի ալեքսոլյան թղթակցություններում հարցի լուծման երկու միտում է նկատվում՝ մեկն ինքնաբուխ, մյուսը պետական մակարդակով նախատեսված:

Երբ 1878 թվականին Կարս քաղաքն իր շրջակայքով անցնում է Ռուսաստանին, Ալեքսանդրապոլի գավառի հողազուրկ գյուղացիները ցանկություն են հայտնում տեղափոխվել այնտեղի հայաթափված և ամայացած վայրերը: Սակայն, կառավարությունը մերժում է մեծամասնության խնդրանքները: Կարսի մարզի ազատ հողատարածքներից շատերում արդեն բնակվում էին ռուս աղանդավորները և Ալաշկերտից գաղթած հայ ընտանիքները (1883, № 73): Իր կողմից կառավարությունն առաջարկում էր Ալեքսանդրապոլի գավառի մի քանի գյուղերի բնակիչներին վերաբնակեցնել Սև ծովի ափերին՝ Յալթայի գավառում, և միջինասիական Մերվ քաղաքի շրջակայքում (1890, №58): Այս գաղափարն ուղղակիորեն հակասում էր ազգային և տնտեսական զարգացման մասին «Մշակ»-ի պատկերացումներին: Հայրենաշինություն ու հայրենաբաղձություն քարոզող «Մշակ»-ը գործի է դնում իր «պաշտպանական» համակարգը: Թերթի թղթակից Շիրակեցին առաջ է քաշում Ախուրյան գետի ջրերով «Անիի դիմացը գտնվող ընդարձակ անապատը» ոռոգելու (1883, №81) կամ նույն գետից ջրանցք բացելու և Արևելյան Շիրակի դաշտերը ջրարբի դարձնելու խելամիտ գաղափարները (1892, №82): Ջրանցք բացելու առիթով նա գրում է. «Պէտք է Շիշթափայ (Փոքր Սեպասար) գիւղի վերևից գետի ընթացքը փոխել, դրա համար հարկաւոր է մի թունբ կառուցանել. այնուհետև Իլլի (Հողմիկ) գիւղի մօտ մի ձոր կայ, այնտեղ հարկաւոր է կամուրջ, որ գետը կամուրջի վրայից անցնի. ուրիշ մեծ դժուարութիւններ չը կան. ծախս կը գնայ մօտաւորա-

պէս 100000ր.» (1892, №109): Երկու ծրագրերի դեպքում էլ նախատեսվում էր ընկերություններ ստեղծել և համատեղ ուժերով գործել: Ի դեպ, Ախուրյան գետից ջրանցք բացելու ծրագիրն իրականացավ 1922-1925 թվականներին:

Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Գեղամ Տեր-Պետրոսյանի՝ «Կովկասի գյուղատնտեսական ընկերության» 1886 թվականի փետրվարի 7-ի նիստում կարդացած զեկուցման համաձայն, Շիրակի տնտեսական զարգացման խթան կարող էին լինել նաև անտառների ստեղծումը և «հոտաուէտ և դեղերի համար գործածվող խոտերի մշակութիւնը», մասնավորապես, ինչպես հիշում է գրող Ատրպետը. «Գյումրիի Ախուրյանի ձորը և Լեռան (Արագած-Գ.Ա.) դաշտերը զարդարել վարդաստաններով» (1886, №17)[5]: «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունին «Մեր գիւղացիների աղքատութիւնը» առաջնորդողի մեջ, վերլուծելով զեկուցման նյութը, իրավացի հարցեր է առաջադրում. «Ի՞նչ միջոցներով, ի՞նչ հնարներով պէտք է սովորեցնել մեր գիւղացիներին, մտցնել նրանց մէջ գիւղական մի որեէ նոր արդիւնքի մշակութիւնը» (1886, №23): Գ. Տեր-Պետրոսյանը, փաստորեն, դրանց պատասխանները չէր տվել: Արծրունու կարծիքով, տնտեսության ոլորտում իրական հաջողություններ կարող են երաշխավորել միայն գիտելիքահեն և ճիշտ հաշվարկված գործողությունները:

Լրատու Գր. Տգր.-ն[6] իր հերթին չափազանց մեծ հույսեր է կապում 1890 թվականին Թոփաղի (Հացիկ), Օրթաքիլիսա (Մայիսյան), Դարբանդ (Կարմրաքար) և Սարիար (Մեծ) գյուղերի մոտ հայտնաբերված լիգնիտ[7] տեսակի ցածր կարգի ածուխի հանքերի արդյունահանման հետ՝ ընդգծելով անտառներից զուրկ Ալեքսանդրապոլի և շրջակա գյուղերի տնտեսական զարգացման համար դրանց կարևոր նշանակությունը (1890, №99: Հմմտ. №109): Տեղեկություններ չկան այն մասին, թե հետագայում հանքերն ինչ սկզբունքով են շահագործվել:

«Մշակ»-ի էջերից քարոզվում էր կատարելագործել տնտեսվարման եղանակները՝ պարարտացնել վարելահողերը, ծառեր տնկել և այլն: Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները օգտագործում էին երկանիվ՝ ասիական սայլեր, իսկ Շիրակեցին իր վերոնշյալ հետազոտության մեջ խոսում է դրանք քառանիվ՝ ռուսական թեթև սայլերով փոխելու անհրաժեշտության մասին (1883, №81;1890, №58): Լրագրում տպագրված նյութերը հաշվի առնելով և ժամանակի պահանջը հասկանալով՝ 1891 թվականին Երևանի նահանգապետն արգելում է Ալեքսանդրապոլի գավառի տարածքում երկանիվ սայլերի օգտագործումը: Նոր սայլերը պատրաստվում էին Ալեքսանդրապոլի 18 արհեստանոցներում (1891, №107):

Ալեքպոլցի «մշակականները» հարկ եղածն անում էին հայ գյուղացիների ինքնագիտակցությունը բարձրացնելու, գյուղացու բարոյական արժանիքները ներկայացնելու համար: Նրանցից մեկը թղթակցում է. «Գիւղացին շատ բարձր է քաղաքացուց, որ նա իր պարզութեամբ, իր ընտանեկան և հասարակական ան-

---

[5] *Տե՛ս ԳԱԹ, Ատրպետի ֆոնդ, վ.95, թ.58:*

[6] *Գրիգոր Թադևոսի Տիգրանյան (1859-1930թթ.)-կարսեցի Տիգրանյան նշանավոր տոհմի ներկայացուցիչ:*

[7] *Թույլ ածխայնությամբ փայտանյութ (слабоуглефицированная древесина), գորշածուխ:*

կեղծ և բնական հաւասարութեամբ կարող է բարոյական օրինակ լինել քաղաքացու համար» (1887, №51): Անգրագիտության պատճառով հայ գյուղացին սնահավատ էր, չէր հետևում անձնական հիգիենային և առողջությանը, խելապակասության հասնող շռայլ էր: Հայ գյուղի ապագայով մտահոգված մտավորականները խիստ լեզու էին բանեցնում՝ երկրագործներին բնութագրելով «նախաջրհեղեղեան վայրենի», «հնամոլ», «ցիմար շինական», «ոչխարային միամտութիւն ունեցող» արտահայտություններով (1879, №143; 1883, №81; 1890, №59): «Մշակ»-ի նամակագիրները ժողովրդին առաջնորդելու և լուսավորելու գործը վերապահում էին գյուղի տանուտերին, ուսուցչին, քահանային, նորավարտ երիտասարդությանը և մամուլին, բայց ***-ի[8] դիտարկմամբ. «Ոչ ոք չը կայ. հայ բուրժուա-ինտելիգէնտը մտած իր տաք բնակարանը՝ «նիսիա[9] զգացմունքներով» ու ցանկութիւններով է բաւականանում: Հայասէրը հօ վաղուց է կորել, անյայտացել» (1887, №73):

Պարտքերի տակ կքած գյուղացիների մեծամասնությունը հյուծվում էր վաշխառուների սահմանած բարձր տոկոսներից: Ականջալուր լինենք «Մշակ»-ի թղթակից Պ.-ի ձայնին. «Նա արդէն գիւղացուն իր ստրուկն է համարում. եթէ տուեց 100 ռուբլ, գիւղացին լաւ գիտէ որ այլ ևս ազատութիւն չունի այդ հրէշից» (1883, №49): Երկրագործներն զգալի վնասներ էին կրում նաև հայ, պարսիկ և հրեա մանրավաճառների՝ «չարչիների» գործունեությունից: Աղքատությունը նրանցից շատերին մղում էր դեպի քաղաք: Այդ գործընթացը Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման անխուսափելի հետևանքներից էր: «Մշակ»-ը մանր տնտեսություններին քայքայումից փրկելու, թշվառ գյուղացիների վիճակը բարելավելու, նրանց պրոլետարացումը կանխելու ուղի է գտնում՝ «առտնին արհեստներ» (кустарныя производства): Պողոս Բերուրյանը, ինչ-որ չափով «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունու քիմքը շոյելով, ծանրակշիռ և համոզիչ կերպով առաջ է տանում գյուղերում արհեստների տարածման հարցը (1883, №81; 1890, №№58, 132): Մանավանդ ձմեռվա ամիսներին դա գտնված այլընտրանք էր գյուղատնտեսական զբաղմունքներին: Առաջադեմ մտածող Պ.Բերուրյանը 1880-1890-ական թվականների համար ժամանակավրեպ դատողություններ է անում: Օրինակ, նրա հետևյալ միտքը. «Ինչի՞ցն է, որ գիւղացին թողնելով իր նախորդի համազգեստները, այժմ երբ փող է ունենում, հագնում է «դրապ, մահուդ, լաստիկ» ... մինչդեռ նրա նախնիքը իրանից աւելի հող ունէին, աւելի ապահով, աւելի հարուստ էին, ու նրանք հագնում էին տան գործած շալից համազգեստ» (1883, №81): Գյուղերում արհեստների տարածումից ակնկալվող օգուտները նրան խանգարել են տեսնել նոր տնտեսակարգի զարգացման օրինաչափությունները:

Պողոս Բերուրյանն Ալեքսանդրապոլում արհեստների արդիականացման ջատագով էր. «Պէտք է հասարակութիւնը ձգտում ունենա արհեստների կատարելագործելուն, որովհետև ամեն մի ժողովրդի ճշմարիտ զարգանալը և յառաջադիմութիւնը կայանում է ուսման և արհեստի մէջ» (1883, №108): 1887 թվականից նա «Մշակ»-ին իր թղթակցություն-նամակներում խոսում է Ալեքսանդրապոլում

---

[8] *«Մշակ»-ի ալեքսոյցի թղթակիցներից մեկի ծածկանունն է:*

[9] *Նիսիա = ապագայի հույսով կատարվող, ենթադրական:*

արհեստագործական դպրոց բացելու մասին (1887, №№131, 138; 1890, №47): Բեռուրյանը հիմնավոր փաստարկներով ապացուցում է, որ այդ դպրոցը կարող է նպաստել քաղաքի տնտեսական առաջադիմությանը: XIX դարի վերջերին, երբ Ալեքսանդրապոլում գրեթե չկային ժամանակակից գործարաններ ու ֆաբրիկաներ, երկաթուղու կառուցումն արդեն իրողություն էր, արհեստագործական դպրոց բացելու «Մշակ»-ի պահանջը խրախուսելի էր: Խնդիրը նոր չէր: Ալեքսանդրապոլի հայ հասարակությունը բազմիցս դիմել էր Կովկասի փոխարքայության իշխանություններին՝ քաղաքի Գավառական և Հոգևոր դպրոցներում արհեստագործական բաժիններ բացելու խնդրանքով, բայց գումար չլինելու պատճառաբանությամբ մերժվել էր: 1902 թվականին միայն ալեքսոլցիների ցանկությունը մասամբ կատարվեց, երբ քաղաքում բացվեց Առնտրական դպրոց:

«Մշակ»-ի ալեքսոլյան թղթակիցներին լրջորեն զբաղեցրել են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Արևմտյան Հայաստանին ու արևմտահայությանը վերաբերող հարցերը:

1877 թվականի ապրիլի 12-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: Ալեքսանդրապոլում կյանքը փոխվում է. տագնապը համակում է ամենքին: Ռուսաստանի կառավարության որոշմամբ սահմանամերձ բնակավայրերի, այդ թվում Ալեքսանդրապոլի բնակիչներին անվտանգության ապահովման նկատառումով անվճար հրացաններ են բաժանվում: Նույնիսկ ալեքսոլցի երեխաներն էին պատրաստ կտրելու «Արևելեան հրէշի» գլուխը: Պահպանվել է «Մշակ»-ի անանուն մի թղթակցի հետաքրքիր հաղորդումը, թե ինչպես են նրանք, փայտյա հրացաններն ուսերին, դիմավորել Կովկասի փոխարքային, երբ վերջինս տեսության էր եկել Ալեքսանդրապոլում տեղակայված ռուսական զորքերին (1877, №26):

Պարբերականի նյութերի վկայությամբ պատերազմի ընթացքում Ալեքսանդրապոլում օդը բուրում էր գարշահոտությամբ, տարածված էր տիֆ վարակիչ հիվանդությունը (1878, №№1, 4, 9): Քաղաքը լի էր գաղթական հայ մշակներով, հայ և ասորի մուրացկաններով:

Առաջին հայ գաղթականները «Թիւրքիայի անգթութիւնների» պատճառով Կարսից Ալեքսանդրապոլ էին եկել դեռևս պատերազմի նախօրյակին՝ 1877 թվականի հունվար-փետրվար ամիսներին: Կարսից, հետագայում Մուշի գավառից եկած մշակները Ալեքսանդրապոլում և համանուն գավառում ապրում և աշխատում էին սոցիալական ծանր պայմաններում, նրանց շրջանում բարձր էր մահացության տոկոսը: Նրանք ստանում էին օրական 20-30 կոպեկ աշխատավարձ: «Մշակը ստիպված է լինում պատառոտած հագուստով, հին մաշված կոշիկներով և շատ անգամ բոբիկ ման գալ քարերի և ցեխերի մէջ, որ կարելի լինի սև օրվայ համար մի քանի կոպէկ թողնել»,-գրում է «Մշակ»-ի աշխատակից Պ.Բ.-ն (1882, № 92): Պետք է ասել, որ զոհացուցիչ չէր նաև ալեքսոլցի բանվորների սոցիալական վիճակը, որոնք ստանում էին տարեկան 15-120 ռուբլի աշխատավարձ (1890, №40): Առնտրականների կրպակներում բանվորներն աշխատում էին նույնիսկ կիրակի օրերին: Այդ «գործակատարների» պահանջով 1891 թվականին Ալեքսանդրապոլի

գավառապետի պաշտոնակատար Զ. Ցիգանկովը քաղաքի առևտրականներին արգելում է կիրակի օրերին կրպակները բացել (1891, №147):

Ալեքսանդրապոլում աշխատող տարբեր թերթերի լրագրողների պես «Մշակ»-ի ալեքսոյան թղթակից Մ. Միհրանյանցն Ալեքսանդրապոլում և Կարսում գրառում է արևմտահայ մշակների տպավորությունները: Այդ մունջխեղդ ակնատեսների վկայությունները գավառական հարստահարությունների տիպական օրինակներ են: Հատված մշեցի մի զառամյալ ծերունու հետ Միհրանյանցի հարցազրույցից. «Անցած տարուն (1877թ.-Գ.Ա.) եմ էկած Մուշէն, ու աս վիճակիս մէջ ըլլելուս պատճառը ան անգութ, անօրէն, բարբարոս քուրդեր ու տաճիկներ են, որ տասնըհինգ տղայ զաւակներս հետզհետէ մեռուցին, կնիկս ու աղջիկս խլեցին, տուն ու տեղս քանդեցին, կործանեցին, մալս ու տաւարս կողոպտեցին, և ինձի ալ, ադ անաստուածներ սպանելու փոխանակ, որ մի անգամից իմ դարդեր հետս գերեզման տանէի, թողին սաղ որ մինչի աս օրերս տեսնեմ, մաշվեմ ու տրորվեմ անբուժելի ցաւերովս» (1878, №72: Հմմտ. 1879, №56): Թղթակցին համարյա նույնն են պատմել նաև Կարսի սրճարաններից մեկում հանգրվանած վանեցի և մշեցի գաղթական մշակները: Ավելին, կարինցի մի երիտասարդ պատմել է Կարինի հայերին ռուսական զորքերի հեռացումից հետո սպառնացող բնաջնջման մասին (1878, № 162): Ակնհայտ է, որ արևմտահայերին տարագրության դրդող Օսմանյան պետության վարած բռնապետական քաղաքականությունն էր, թուրք պաշտոնյաների անօրինությունները: Օրինակ, երբ 1883 թվականին Օսմանյան կառավարությունը խստացնում է հարկային քաղաքականությունը, մասնավորապես մի անձից սկսում է գանձել 8 ռուբլի գլխահարկ, բազում արևմտահայեր գալիս են Ալեքսանդրապոլ և Թիֆլիս՝ գումար վաստակելու (1883, №78):

Բայց հայի պայքարելու կորովը զորեղ էր: «Մշակ»-ի աշխատակից Պ.Բ.-ն Մուշի գավառի Խլադ գյուղի մի բնակչից գրառել է, թե ինչպես 1882-1883 ձմեռը քրդերը չորս անգամ հարձակվել են Խլադ գյուղի վրա, բայց ոչինչ չեն կարողացել տանել, քանի որ խլադցիները գյուղի քահանա Տեր-Գրոյի գլխավորությամբ դիմադրել են գայլաբարո ավազակներին (1883, №78): Ու սա այն դեպքում, երբ 1883 թվականի սկզբից Մուշից, Վանից, Կարինից Ալեքսանդրապոլ ու Կովկասի այլ քաղաքներ և հակառակ ուղղությամբ երթևեկող զինակիր հայերին ռուս-թուրքական սահմանի վրա «եասաուլ»-ներն սկսել էին զինաթափել՝ պատճառաբանելով, թե «հային կառավարութիւնից իրաւունք տուած չէ զէնք կրելու, իսկ թուրքին ու քիւրդին կարելի է» (1883, №29):

Ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը, բեռլինյան հիասթափությունը ոգևորության մի նոր ալիք են բարձրացնում հայության շրջանում: 1878-1883 թվականներին հայրենասիրական կրքերի հրավառությունից լուսավորվում են Հայկյան Մշակի տիրույթները: Հայ կամավորների զենքերի վառոդի հոտը պատում է հայկական երկնակամարը: Ալեքսոյցիները հաղորդակից էին ազգասիրական այդ շարժմանը: «Մշակ»-ի սրտացավ թղթակից ***-ն երգիծանքով գրում է. «...Ալէքսանդրապոլը թէ քիմիապէս և թէ ֆիզիքապէս ազգասէր է» (1879, №103): Ազատագրական պայքարի գաղափարախոսության յուրօրի-

նակ դրսևորում էր այն, որ Ալեքսանդրապոլի Սահակեանուշյան իգական դպրոցի աշակերտուհիները գործել էին «Հին Հայաստանի» քարտեզը (1883, № 131): Ալեքսանդրապոլցիների հայասիրության ցուցքն են նաև Ռաֆֆու և նրա «Կայծեր» վեպի մասին գովասանական խոսքերը «Մշակ»-ում (1883, №№42, 47, 64): Միջազգային հարաբերություններում քաղաքական վերադասավորումների, հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի և Օսմանյան պետության վերաբերմունքի փոփոխության պատճառով, սակայն, «Հայաստանի աստղը» խամրում է:

Ալեքսանդրապոլցիները մշտապես մասնակցել են հոգևոր արևմտահայերի «Մշակ»-ի կազմակերպած հանգանակություններին, սիրով ընդունել այդ նպատակով Ալեքսանդրապոլ եկած արևմտահայ հոգևորականներին (Ն. Վարժապետյան, Ա. Ռուբինյան, Պ. Նաթանյան և այլք):

1880 թվականին Մեծ և Փոքր հայրենիքի բազմաթիվ շրջաններում թևածում էր սովը: Համաժողովրդական բնույթ է կրում Վանի, Բայազետի և Ալաշկերտի սովյալների օգտին կազմակերպած հանգանակությունը: Այս գործը համակարգող ուսուցիչ Աբիսողոմ Հովհաննիսյանցի տվյալներով՝ Ալեքսանդրապոլում հավաքվել է մոտ 1200 ռուբլի գումար (1880, №85): Ալեքսանդրապոլցի ունևորները 15000 ռուբլու ալյուր են բաժանում քաղաքի աղքատ ընտանիքներին (1880, №77): Օժանդակություն են ստանում նաև Ալեքսանդրապոլի գավառի չքավոր գյուղացիական տնտեսությունները: Երկրի կառավարությունը նրանց երեք փուդով 25000 փութ[10] սերմացու ցորեն է բաժանում: Անշուշտ, կարիքավորներին ցուցաբերած օգնությունը բավարար չէր, ու շատերի մեջ այդ հանգամանքն իրավացիորեն դժգոհություն է առաջացնում: «Մշակ»-ի թղթակից Գ. Բաղրամյանցը, ճիշտ պահը որսալով, բարձրաձայնում է ազգային-բարեսիրական գործերի համար նվիրատվության հարցում ծուծկալ վաճառականների և նրանց ցուցամոլությամբ տառապող կանանց մասին: Կանանց այդ տիպը հավաքույթների ժամանակ մեծ գումարներ էր ծախսում (200-300 արծաթ ռուբլի). «Հրաւիրվում են 40-50 կանայք, սկսվում է կերուխումը, առաջ են գալիս 9-10 տեսակ թանգագին շաքարլամաններ, 6-7 տեսակ ընտիր քաղցրաւենիք, 4-5 տեսակ նոր և թարմ մրգեր այսպէս ամեն բան իր կարգին» (1880, №175): Ազգասիրությունը և անտարբերությունը ձուլելով մի կաղապարում՝ նա կարողանում է վեր հանել հարուստ վաճառական խավի բնավորության վատ գծերից մեկը:

1880-1881 թվականներին խղճի ազատության և ազգության հատկանիշների վերաբերյալ «Մշակ» և «Մեղու Հայաստանի» թերթերի գաղափարական բանավեճում «Մշակ»-ը կարևորում էր ազգային պատկանելության գործոնը՝ մերժելով առաքելական, կաթոլիկ, բողոքական և մահմեդական հայերի միջև տարբերություն դնելու օգտին «Մեղու»-ի կարծիքը: «Մշակ»-ի ալեքսանդրապոլցի տեսաբաններ Պետրոս Բեբուրյանը (Հայ-Հռոմէական, Հայ-Կաթոլիկ), Սմբատ Պարսամյանցը, Ա. Ափրիկյանցը, Հ. Պահլավունին գրոհում են թերթի առաջին էջերը: Չժխտելով հայ եկեղեցու ազգապահպան դերը և իրենց խոսքը համեմելով հայ ժողովրդի պատ-

[10] *1 փութը = 40 ֆունտի = 16 կիլոգրամ 380 գրամի:*

մական ճակատագրի դառը փորձով՝ նրանք ազգության հատկանիշներից առաջնային էին համարում լեզուն և հայրենիքը: Հոգու խորքից է ասված. «Կրօնը ազգութեան հետ կապ չունի. ամենայն հասկացող մարդ այդ կընդունի: Իսկ թէ կրօնը եղել է կամ է ազգութեան նեցուկ, - այդ բոլորովին այլ է» (1880, №171): «Մշակ»-ի ալեքսոյցի տեսաբանների համահավաք մտածողության արգասիքը հետևյալն էր. հայ ազգի գոյության կռվանը ներքին թշնամանքից, եղբայրասպանությունից հրաժարումն ու միասնաբար «ժողովրդի տնտեսական և մտաւոր շահերի մշակութեան գործն է» (1880, №168):

«Մշակ»-ը երկու տասնյակ հետաքրքիր նյութեր է մատուցում Անդրկովկասի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի կաթոլիկ հայերի վերաբերյալ: Դրանց վկայությամբ՝ Ալեքսանդրապոլում բնակվում էին 40-50 ընտանիք կաթոլիկ հայեր, որոնք 1827 թվականին եկել էին հիմնականում Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքից (1878, №150): Նրանք զբաղվում էին արհեստագործությամբ՝ ներկարարությամբ և հացթուխությամբ, ունեին իրենց եկեղեցին ու դպրոցը: Սբ Աստվածածին եկեղեցին 1843 թվականին սկսել էին կառուցել Կապուչինյան միաբանության միսիոներ-հոգևորականները՝ «պատեր Փիլիպէ և ընկերներ» (1888, №79)[11]: 1844 թվականին Ռուսական կայսրության տարածքում Կապուչինյան միաբանության գործունեության արգելումից հետո եկեղեցու կառուցումը հասարակության աջակցությամբ 1855 թվականին ավարտում է հայ կաթոլիկ նշանավոր հոգևորական Ալեքսանդր վրդ. Արարատյանը (1820-1888թթ.): «Մշակ»-ի թղթակիցներ Կարապետ Հովհաննջանյանի և Պետրոս Բեբուրյանի դիտարկմամբ հռոմեական ոճով կառուցված եկեղեցին զուրկ էր շքեղությունից:

Ալեքսանդրապոլի և Անդրկովկասի մյուս բնակավայրերի հայ կաթոլիկ եկեղեցիներում և մատուռներում ժամերգությունները կատարվում էին հայկական ավանդությամբ, հոգևոր սպասավորները հայերենով էին քարոզում: «Առանց մայրենի լեզուի երբէք չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի կրօնական համայնք և ոչ մի ազգութիւն»,- գրում է Պ. Բեբուրյանը (1882, №145): Լատին հոգևորականները ճնշումներ էին գործադրում կաթոլիկ հայերի վրա, որպեսզի նրանք մոռանան իրենց ծիսադավանական ավանդությունը, տեղական բարքերն ու սովորությունները, լեզուն, չզորակցեն ազգային կենսական խնդիրների լուծմանը: Սակայն, ի պատիվ Անդրկովկասի հայ կաթոլիկ համայնքի հոգևոր առաջնորդներ Պողոս վրդ. Շահխուլյանի, Ա. վրդ. Արարատյանի և Պողոս վրդ. Նահապետյանի, կաթոլիկ հայերի ազգային ինքնությունը չխաթարվեց:

1848 թվականից Ալեքսանդրապոլում գործում էր հայ կաթոլիկ դպրոց, բայց առաջին կանոնավոր դպրոցը (գիշերօթիկ) բացվում է 1858 թվականի հոկտեմբերի 29-ին: Հիմնադրի՝ Ա. վրդ. Արարատյանի նպատակը հայ կաթոլիկ համայնքի համար հոգևորականներ պատրաստելն էր: Դպրոցի պատերին կպցրած էին զանազան լեզուներով աշխարհագրական, փոստային և հեռագրական քարտեզներ, նաև սրբազան պատմության վերաբերյալ մոտ 240 պատկերներ (1879, №193): Դպրոց

[11] *Տե՛ս «Նոր-Դար», Թ., 1888, №174:*

կարող էին ընդունվել 15-17 տարեկան տղաները: Ուսումը վճարովի էր: Դպրոցում դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, լատիներեն, թվաբանություն, կրոնագիտություն, աստվածաբանություն, ճարտասանություն, սրբազան պատմություն, աշխարհագրություն, համաշխարհային պատմություն և երգեցողություն առարկաները (նույնը տեղը): Ուսուցիչներն էին Ա. ծ. վրդ. Արարատյանը, Սարգիս վրդ. Մխիթարյանը և Սիմեոն սարկավագ Չմշկյանցը: Հայ կաթոլիկ հոգևոր դպրոցի գոյության առաջին շրջանում (1848-1853թթ.) աշակերտների ընտրության հարցում դավանական խտրականություն չէր դրվում և մեծ ուշադրություն էր դարձվում նրանց մտավոր կարողություններին (1881, №9): Հաջորդ շրջանում (1858-1888թթ.) ուսուցման հնացած մեթոդների կիրառմամբ կրթությունը ձեռք է բերում նեղ կրոնական բովանդակություն: «Մշակ»-ի թղթակից Հայ-Հռովմէական-ին հուզում է դպրոցի առարկայացանկից «ազգային պատմութեան, բնագիտութեան և աշխարհագրութեան» բացակայության խնդիրը (1879, №193): Նրա կարծիքով, ազգային շահերից է բխում հայոց պատմություն և հայոց աշխարհագրություն առարկաների դասավանդումը և գիտական մանակավարժների ներգրավմամբ դպրոցի բարեփոխումը (1881, №9):

1891 թվականի սեպտեմբերի 10-ին Ալեքսանդրապոլում բացվում է կաթոլիկ հայերի միադասարանյան արական դպրոցը, որտեղ սովորում էին 30 աշակերտներ: Դպրոցի հոգաբարձուներն էին Սահակ քահ. Տեր-Աբրահամյանը, որը դասավանդում էր նաև կրոն և քրիստոնեական վարդապետություն առարկան, Պողոս Այտինյանը և Պետրոս Բեբուրյանը: Դպրոցում ուսուցչություն էին անում Կարապետ Առաքելյանը (հայոց լեզու, թվաբանություն, երգեցողություն) և Հայկ Արաբաջյանը (ռուսաց լեզու): «Մշակ»-ի նամակագիր Շիրակեցին է պատմում. «Այս դպրոցը հայ-կաթոլիկ համայնքի մէջ առաջին կանոնաւոր ուսումնարանն է, իսկ մինչև այժմ եղածները բոլորն էլ հին-խալիֆայական սիստեմով էին, որոնց մէջ թագաւորում էր ծեծը և հայհոյանքը» (1891, №110):

Ալեքսանդրապոլի հայ կաթոլիկ համայնքի հոգևորականները և մտավորականները բարձր էին գնահատում Մխիթարյանների կրթալուսավորական առաքելությունը և սերտ կապեր էին պահպանում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամների հետ (Ղևոնդ Ալիշան, Գաբրիել վրդ. Նահապետյան): Հայ պատանիները տեղում ուսումն ավարտելուց հետո կրթվում էին Վենետիկի և Փարիզի Մխիթարյան վարժարաններում (Ավետիք Եզեկյան, Ներսես Ճնտոյան):

Լրագրում ալեքսպոլյան թղթակիցները շրջանառել են նաև եկեղեցական, դպրոցական-մանկավարժական, մշակութային (թատրոն, հրապարակային դասախոսություն, գրադարան-ընթերցարան, գրքերի հրատարակություն) ոլորտներին, փոստին վերաբերող տեղեկություններ:

Ամփոփելով նշենք, որ ազատական «Մշակ»-ում և «Մշակ»-ի հետ հասարակական գործիչները քննարկում էին հայության համար այսօր էլ ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հային հայրենիքում պահելը, ազգի միասնականությունը, աշխատատեղերի ստեղծումը, ազգի առջև ծառացած խնդիրների համակարգումն ու լուծումը:

АЛЕКПОЛЬСКИЕ КОРРЕСПОНДЕНЦИИ «МШАК»-у В 1872-1892 гг.

___ *Резюме* ___ ___ *Г. Айвазян* ___

В 1872-1892гг. из Александраполя, под разными псевдонимами, с газетой «Мшак» сотрудничали представители свободомыслящей интеллигенции: А. Априкянц, братья Петрос и Погос Бебуряны, Г. Баграмянц, С. Парсамянц и др. В направляемых ими в газету письмах-корреспонденциях освещение многочисленных вопросов, касающихся экономической, религиозной, политической жизни Александраполя и одноименного уезда, резкие постановки вопросов о патриотизме, защите слоя мелких предпринимателей, помощи проживающих в Турции западных армян, требование от ответственных за развитие общественной жизни шагать в ногу со временем и служить с верой в свое призвание, исходили из ключевой озабоченности сохранением существования армянского народа.

Տեղեկություններ հեղինակի մասին
Այվազյան Գևորգ Սամվելի – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, E-mail: AyG.84@mail.ru